

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Արմեն Պետրոսյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

### 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշին, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 5-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Միջազգային էներգետիկ գործակալություն (IEA)

### 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

EU4Energy ծրագրի շրջանակներում մասնակցություն «Միջսահմանային էներգահամակարգի ինտեգրում և առևտուր» թեմայով ֆորումին

### 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Միջսահմանային ինտեգրված էներգահամակարգերի և առևտրի կենսական նշանակությունը EU4Energy ծրագրի շրջանակներում ընդգրկված երկրներում ճկուն, կայուն և անվտանգ էներգահամակարգերի գործունեության ապահովման համար (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա և Ադրբեջան)

### 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Միջոցառման շրջանակներում ներկայացվեցին միջսահմանային էներգահամակարգերի ինտեգրման և առևտրի մարտահրավերներն ու առավելությունները: Զեկույցներ ներկայացվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում կիրառվող մոտեցումների, պետական աջակցության, կարգավորման մեխանիզմների, թափանցիկ և հուսալի տվյալների բազայի նշանակության վերաբերյալ: Առանձին ելույթներով ներկայացվեցին Եվրոպական մի շարք երկրների, ասիական էներգահամակարգի, ինչպես նաև ամերիկյան ընկերությունների փորձը (EU 2017/1485 կարգավորում, անցումային ժամանակահատվածում վերականգնվող ռեսուրսների զարգացում և ինտեգրում ցանցին):

Նստաշրջաններից մեկը նվիրված էր EU4Energy ծրագրի շրջանակներում ընդգրկված երկրների տարածաշրջանային համագործակցության զարգացմանը, ենթակառուցվածքների պլանավորմանը և ինտեգրմանը, առևտրի կազմակերպման խնդիրներին: Ելույթներով հանդես եկան նաև Հայաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Ադրբեջանի ներկայացուցիչները:

Անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային «կանաչ միջանցք» ծրագրին, որով նախատեսվում է դեպի Եվրոպա կանաչ էներգիայի արտահանում: Այդ համատեքստում նշվեցին նաև Հայաստանի

հնարավորությունները (7% ատոմային և 7% վերականգնվող/արևային էներգիա):

Եվրոպական երկրների զարգացման ծրագրերի վերաբերյալ զեկույցում անդրադարձ եղավ էներգիայի կուտակման վերաբերյալ 33 ծրագրին, որից 28 հիդրոակումուլյացիոն են, 4-ը՝ սեղմված օդի տեխնոլոգիայի հիման վրա և 1 հատ էլեկտրաքիմիական ( էլեկտրական մարտկոցի հիմքի վրա):

Նշվեց նաև, որ վերականգնվող աղբյուրներով նոր հզորությունների զարգացման համար կարևորագույն ցուցանիշներից է հարևան պետությունների հետ միջհամակարգային կապերի զարգացումը՝ քանակի և թողունակության ավելացմամբ:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՅՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա համագործակցության ձևաչափի, աշխատանքային հանդիպումների կազմակերպման անհրաժեշտության և իրականացման վերաբերյալ:

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն



Արմեն Պետրոսյան